

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքում 2023թ. մայիսի 15-ին ժամը 11⁰⁰-ին համայնքապետարանի շենքում կայանալու է Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ:

ԼՈՏ-1 Ծածկագիրը՝ ՀՄ-01-23. Կառուցապատման իրավունքով տրամադրվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 26/3 հասցեում գտնվող՝ 04-001-0050-0098 ծածկագրով, 41.0 քմ ընդհանուր մակերեսով կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, 15 տարի ժամկետով:

Հողամասի կառուցապատման տրամադրման մեկնարկային գինը սահմանվում է 1 քմ համար տարեկան 12000 ՀՀ դրամ, ընդհանուր մակերեսի համար 492000/չորս հարյուր իննսուներկու հազար / ՀՀ դրամ:

Մեկ քայլի չափը և նախավճարը կազմում է մրցույթի առարկայի նախնական գնի 5 տոկոսը:

Մրցույթում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (սերվիտուտներ) չկան:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

Հայտ՝ անձը հաստատող փաստաթղթով.

Մրցույթի մասնակցության վճարի անդորրագիր 20000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով.

Մրցույթի առարկայի 5 տոկոսի չափով նախավճարը վճարվում է մրցույթի անցկացման օրը.

Հայտերի ընդունումը դադարում է 2023թ. մայիսի 10-ին, ժամը 18⁰⁰-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արմավիրի համայնքապետարան՝

/ք.Արմավիր Հանրապետության 32/: Հեռ. (0237) 2-02-24, 2-28-64: